Ի՞ՆՉ Է ԿԱՆԱՉ ԳՐԱԴԱՐԱՆԸ

ՀՏԴ 02 + 502

Շրջակա միջավայրը մեր շրջակայքն է և/կամ պայմանները, որտեղ ապրում ու գործում են մարդիկ, կազմակերպությունները, կենդանիները կամ բույսերը: Միջավայրը կարող է լինել բնական, սոցիալական կամ մշակութային: «Կայուն զարգացումն այն զարգացումն է, որը բավարարում է ներկայիս կարիքները՝ չվնասելով ապագա սերնդի սեփական կարիքները բավարարելու կարողությանը» (Մեր ընդհանուր ապագան, Բրունդթլենդի զեկույց, ՄԱԿ):

Այսօր շրջակա միջավայրը վտանգված է կլիմայական փոփոխություններով և այլ սպառնալիքներով՝ ներառյալ սոցիալական անհավասարությունը: Բոլոր կազմակերպությունները կայուն զարգացման միջոցով պետք է աշխատեն պահպանել շրջակա միջավայրը: Խոսքը վերաբերում է նաև բոլոր տեսակի գրադարաններին, որոնք կարող են ակտիվ և նշանակալի դեր կատարել կայուն զարգացման գործում:

Կանաչ և կայուն գրադարանը հաշվի է առնում բնապահպանական, տնտեսական և սոցիալական կայունությունը:

Կանաչ և կայուն գրադարանները կարող են լինել ցանկացած չափի, բայց պարտադիր ունենան կայունության հստակ օրակարգ, որը ներառում է.

➢ *Կանաչ շենքեր և սարքավորումներ*. շենքի և սարքավորումների արտանետումները կամ ածխածնի հետքը ակտիվորեն նվազում է:

➢ *Կանաչ գրասենյակի սկզբունքներ*. գործառնական առօրյան և գործընթացները բնապահպանական առումով կայուն են:

➢ *Կայուն տնտեսություն*. սպառումը զուսպ է, շրջանակային և համընդհանուր օգտագործվող տնտեսության պրակտիկան զարգացած է և համայնքին հասանելի:

➢ *Գրադարանային կայուն ծառայություններ*. օգտատերերի համար հեշտ հասանելի է պատշաճ և արդի տեղեկությունը: Առաջարկվում են ընդհանուր տարածքներ, սարքեր և բնապահպանական կրթություն, իսկ գործողություններն արդյունավետ են: Գրադարանն ունի ածխածնի դրական ձեռքի դրոշմ:

➢ *Սոցիալական կայունություն*. կարևորվում է լավ կրթությունը, գրագիտությունը, համայնքի ներգրավվածությունը, միջմշակութային բազմազանությունը, սոցիալական ներգրավվածությունը և ընդհանուր մասնակցությունը: Գրադարանն ակտիվորեն աշխատում է անհավասարությունը նվազեցնելու ուղղությամբ:

➢ *Շրջակա միջավայրի կառավարում*. բնապահպանական նպատակներն են SMART (Specific՝ Հատուկ, Measurable՝ Չափելի, Achievable՝ Իրագործելի, Realistic՝ Իրատեսական և Timebound՝ Ժամանակի մեջ չափելի), և գրադարանն աշխատում է նվազեցնել իր բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Գրադարանի բնապահպանա-

կան քաղաքականությունը, նրա իրականացումը և բնապահպանական աշխատանքների արդյունքը հաղորդվում է ավելի լայն լսարանի:

➢ *Պարտավորություն բնապահպանական ընդհանուր նպատակների և ծրագրերի նկատմամբ.* պարտավորությունն առաջնորդվում է ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներով, Փարիզի կլիմայի համաձայնագրով և բնապահպանական նմանօրինակ/հարակից հավաստագրերով ու ծրագրերով:

Հղումը տե՛ս
https://www.ifla.org/g/environment-sustainability-and-libraries/ifla-green-library-definition/

Անգլերեն բնագրից թարգմանեց
Տիգրան Զարգարյանը
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան